ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒ

ՄԱՍՆ ՁՈՐՐՈՐԴ

(Տես յ'էջ 409)

ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳԱՀԱՄԱՐ

—ԽԹ—

Ցեղս Հայերն երկուքի կը բաժնուին, բուն բնակիչք և գաղթականք։ — Պարսից հետ յամի 1828 կռած թուրքական գաշինքէն առաջ՝ Ատրպատականի գաւառին այլեւայլ շրջաններէ հօս 8000 ընտանիք գաղթեցին։ Եւ որովհետեւ այլեւայլ կողմերէ էին, ինչպէս՝ Մարաղու, Խոյի, Սալմաստի, Դաւրիժու, Ուրմիոյ, և այլն, անոր համար իւրաքանչիւրն իւր գաղթած Ատրրպատականի գաւառակաց անունն ստացաւ. որով կազմեցին՝ մարաղեցի, խոյեցի, սալմասցի, դաւրիզցի, ուրմիացի և այլն, անուամբ հասարակութիւններ։ Այս հասարակութեանց մէջ ուշադրութիւն կը գրաւեն Սալմաստցիք, որք միանգամայն սաւրացի եւս կը կոչուին, մեծամասնութիւնը Սաւրա գիւղի բնակիչ լինելուն համար։ Սալմաստցիք ինչպէս ի Պարսս՝ նոյնպէս և հօս կ'որոշուէին իրենց յատկութեամբք. և արդէն իսկ ի վաղուց՝ դեռ քանի որ Պարսկաստանի մէջ էին՝ ժողովուրդը խաբելու շատ դէրութիւն ունէին։ Կ'ըսեն, թէ այդ յատկութիւնները նոցա մէջ զարգացընող գլխաւորապէս իրենց պարապմունքն էր, վասն զի գրեթէ ամէնքն այլ ոսկերչի արհեստով կը զբաղէին։ Բայց որովհետեւ Սալմաստի մէջ ոսկեգործ արուեստաւորք բազմաթիւ էին, Սաւրացիք անհրաժեշտ հարկ համարեցան շահաւոր կերպով աշխատելու համար ուրիշ աշխարհներ երթալ։ Այլ անոնց սիրելագոյն գործոյ և պարապմանց յարմարագոյն տեղն եղաւ Կոստանդնուպոլիս, ուր բաց ի իրենց արուեստներով զբաղելու՝ կը գործածէին նաեւ առանձին խաբէութեան ոճ մի, զոր փանդ (1) կ'անուանէին, և այսպէս կը կա-

1. Փանդ, (ֆէնտ) պարսկերէն կը նշանակէ՝ խորհուրդ, ժողով, խորագիտութիւն, մատտաղութիւն, և այլն։

digitised by A.R.A.R.@

տարուէր. երկու երեք հոգի սեղանաւոր ձեւանալով՝ կ'երթային այլեւայլ մեծատանց քով՝ արծաթէ դրամները ոսկիէ դրամոց հետ փոխելու, այս վերջնոյս մեծ շահովը։ Ենթադրենք որ երկու հոգի եկան հարուստի կամ սեղանաւորի մի տուն կամ վաճառանոցը. սակարկութիւն կ'ընեն, կը համաձայնին գնոյն նկատմամբ, և կը սկսին իւրաքանչիւր ոսկեդրամները կշռել, որպէս զի անոնց կշռոյն վրայ ապահովնան։ Ցետ զայն աւարտելու, կը սկսին Սաւրագեղցիք համրելով՝ մի առ մի իրենց ձեռքով կապած պարկի մէջ դնել, որոյ բոլորովին նման ուրիշ մ'ալ պղընձէ բոլորակներով լեցուցած իրենց լայն թեղանիներու մէջ կը պահէին։ Երբ հաշիւը կը վերջանար, տիրոջ կ'ըսէին թէ դրամը մոռցած են վրանին առնուլ և թէ կ'երթան զայն բերելու. բայց որպէս զի ի դարձին ոսկեդրամքը կրկին չհամրեն, կը խնդրէին տիրոջմէ որ զայն իւր արկղի մէջ պահէ՝ բայց բանալին իրենց յանձնէ։ Բարեմիտ տէրերը միշտ այս բանիս կը զիջանէին, վասն զի ամենեւին մնաս մի չէին տեսներ մի քանի վայրկեան բանալին արկղէն հեռու մնալուն, քանի որ արկղը միշտ իրենց քովերնին էր։ Սաւրագեղցիք դրամոց պարկը կնքելով՝ արկղի մէջ կը դնէին, բայց միանգամայն ամենայն դիւրութեամբ կը փոխէին զայն թեւերնուն մէջ պահած պղնձով լի նման քսակին հետ. յետոյ արկղը փակելով և բանալին իրենց հետ առած, ողջունելով զտէրը վերջին անգամ դուրս կ'ելնէին՝ այլ ելս ամենեւին չդառնալով։ Անտարակոյս տէրը սեղանաւորաց դարձին կը սպասէր, բայց յուսահատելով մի քանի օրէն արկղը կը բանար, առանց բնաւ տարակուսելու դրամոց արկղին մէջ լինելու վրայ. այլ ի՞նչ տեսնէ, յիրաւի մէջն էր նոյն քսակը, բայց փոխանակ ոսկեդրամոց պղընձի խեշերանոք լի։ — Սաւրագեղցիք զայս ընելու համար ամենայն զգուշութիւն ի գործ կը դնէին, մի քանի անգամ կու գային կ'երթային, երկար սակարկութիւն կ'ընէին, շատ ճոխ կը հագուէին, և այլն։ Դարձեալ, փանդը յաջողցընելու համար, թէպէտ ցանցառ կը հանդիպէր, առանձին մի քանի վարժ անձինք ընտրուած էին։ Շատերն այլ ծածուկ թուրքի ու պարսկի ոսկի և արծաթ դրամներ կտրելու կը զբաղէին, յորում մետաղական բաղադրութիւնը շատ խառնելով՝ մեծ վաստակ կ'ընէին։

Սաւրագեղցոց մաս մ'այլ Ռուսիոյ սահմանները գաղթելով՝ Երեւանու գաւառի մէջ, ժամանակ մի դեռ նոյն արուեստով զբաղեցան, բայց ոչ երկար։ Փանտին կամաց կամաց ուրիշ խաբէութիւն մի փոխանակեց. դիտեցին տեսան որ ռուս գեղջուկներ շատ կրօնասէր ու միանգամայն դիւրահաւան են, ուստի

digitised by A.R.A.R.@

կրօնքը իրենց ձեռքը չահաստացութեան գեղեցիկ հնարք մի դարձուցին։ Պարսկահպատակ սորիներէն կամ տաճկահպատակ յոյներէն՝ պարսիկ կամ թուրք տունակներ գնելով և տեղացի իշխողներէն երկու տարուան ըսուած անցագրերը առնելով, Սարագեղցիք կ'ուղեւորուէին դէպ ի Ռուսաստան, հօն անարգ արուեստով մի զբաղելու, որ իրենց լաւ չահ կը բերէր, և որով ցարդ խակ կը զբաղին՝ այլ ոչ ինչպէս առաջ, և աւելի չափաւոր։

Մինոնք դեռ ճանապարհ չինկած՝ կը հաւաքէին զանազան տեսակ սատափէ խաչեր, զոր մանաւոր արուեստաւորներ թորքաստանէն կը բերէին, փոքր պատկերներ թղթէ շրջանակներով, զորս Ցիդիսու մէջ մանաւորապէս խաչագողոց համար աշխատող վրացի մի կը պատրաստէր, կտաւէ սաւաններ, որոց վրայ խոշոր ու անարուեստ Քրիստոսի խաչելութիւն մի կը նկարէին, և ուրիշ նման բաներ։ Երբ կովկասու լեռներէն կ'անցնէին, կը ջանային ձի և սայլ մի գտնել, որոյ վրայ նստած կը սկսին ամբողջ Ռուսաստանը քալել՝ երբեմն մինչ ի Սիբիրիա։ Խաբեբայն՝ վրան յունական վերարկու մի առած, զինքը յայողութեամբ մերթ յոյն կրօնաւոր կ'անուանէ, մերթ ալ վանահայր, կամ քահանայ կամ աւագ սարկաւագ, և այլն և այլն։ և ի հաստատութիւն ըսածին՝ հարկաւոր եղած տեղ ունի պատրաստ նաև Երուսաղեմայ մետրապոլտին վկայականը, անտարակոյս կեղծ։ Գիւղի մէջ ամենէն առաջ քահանային քով կ'երթայ և թեմական սահմանապետի մի՝ բաց, շինծու թղթին վրայ հիմնուած, հրաման կ'առնու Երուսաղեմայ այլեւայլ վանորէից համար ողորմութիւն ժողվելու։ Երբ հրամանը կ'ընդունի և յաճախ նաև առանց այդ հրամանին սպասելու, կը սկսի հարուստներու տները այցելել։ երբ տանուտէրը գտնէ, կը հանէ անոր առջեւ կը դնէ իւր սատափէ մեծ խաչը, զոր միշտ առանձին արկղով մի հետը կը տանի, և նախ աղօթելու պէս քանի մի ձայներ հանելով, ապա կը սկսի յորդորել որ ի նպաստ Երուսաղեմի բան մի նուիրէ։ միանգամայն կը պատմէ հին ու նոր կտակարանի և Հարանց վարուց քանի մի դէպքեր, սոր անոր փոքրիկ սատափեայ խաչեր ընծայ կ'ընէ, և փոքր պատկերներ, լաթի վերայ նկարուած պատկերներ, և այլն։ Ցէրերը շուտով կը խաբուին և կը սկսին կրցածնուն չափ նուէրք ընել՝ դրամ, կտաւ, վարշամակ, արծաթեղէն և ոսկեղէն նիւթեր, և այլն։ և կը պատմեն Սարագեղցիք, թէ կալուածատէրներէն և հարուստ գեղացիներէն մինչեւ անգամ 10–15 պուլիմպերիալ (50–75 ռուբլի) ընդունած են երբեմն, ի բաց առեալ ուրիշ նիւթեր և գիւղական

digitised by A.R.A.R.@

բերքեր, ինչպէս են՝ վարսակ, հաճար, կտաւատ և այլն, զորս յետոյ քաղաքաց մէջ պատրաստ գրամի կը փոխեն. աւելի հա-մարձակները վաճառականաց քով ալ կ'երթային, յորոց՝ մանա-ւանդ ի կանանց՝ շատ աւելի կ'ընդունէին։ Կը սպրդին կը մրտ-նեն նաեւ զինուորանոցաց մէջ, ուր ամենէն ստորնագոյն աստի-ճանաւորէն սկսեալ՝ նոյն իսկ մի մի կոպէկ ողորմութիւն այլ կը ժողվեն. կան և այնպիսի անձինք որ մինչեւ Նախիջեւանու չըր-ջակայքէն կը սկսին իրենց պարսաւելի արուեստը գործադրել, ինչպէս Երասխի ափանց վրայի բնակութեանց մէջ, Կողակաց պահակատանց, և Ցփղիսու զօրատանց և պատերազմական հի-ւանդանոցին մէջ։ Ինչ որ կը ստանան՝ իսկոյն տեսրի մի մէջ կը նշանակեն՝ բայց ոչ գրերով, այլ զանազան գծագծուկ նշաններով՝ որ աւելի յոյն գրութեան նմանութիւն կը բերէ. ապա կը թա-խանձեն տէրերը՝ որ խոստանան թէ երբ և որչափ ինչ դեռ պիտի տան յօգուտ Երուսաղեմի, և այդ խոստումն այլ տեսրի մէջ կ'անցընեն։ Ցիշողութիւններին այնպէս սուր է, որ երբէք չեն մոռնար՝ թէ տեսրի մէջ ինչ գրած են այն մոռացածին նշաններ-ով, և ըստ այնմ ալ ճիշդ ժամանակին կ'երեւնան տիրոջ քով, և կը պահանջեն խոստացած գումարը՝ սպառնալեք Երուսաղեմի անէծքը ժառանգելու, ուստի և կը յաջողին ի վաճառականաց կամ անոնց կնիկներէն խոստումն առնուլ՝ տարուէ տարի որո-շեալ ժամանակ ի նպաստ Երուսաղեմի խոշոր գումար մի նուի-րել, և զոր անվրէպ կ'ընդունին։ Մի այն թէ գրամ շահին՝ ա-մենեւին հնարք մի ձեռքէ չեն փախցրներ. իրենց յանդգնու-թիւնը մինչեւ յայն կը հասնի, որ Ինդեան և Զատկի օրերը անօրհնէքի կ'երթեն, և որ չարագոյնն է՝ առաջ նաեւ տղաք կը մկրտէին, մեռելներ կը թաղէին՝ արարողութեան կարգին խօս-քերն ի բերան ուսած. միանգամայն և պէսպէս հայ և թաթար լեզուաւ երգեր փոխան աղօթքի արտասանելով։ Այդ գործողու-թիւնը իրենց համար ճարտարութիւն կը համարուի, զոր կա-տարեալ կերպով կը սորվին։ Մէջերնին սոյն արուեստիս մէջ լաւ հմուտները՝ գործոյն ընկեր պատանի օգնականներ կը գտնեն, զորս նախ մի քանի տարի հետերնին կը քալցընեն. և երբ անոնք այլ նոյն կենաց կը սովորին և կը վարժին ռուսերէն խօսել, այն ատեն առ սակաւ սակաւ տներու մէջ կը սկսին մրտ-ցընել, անոնցմով սարկաւագի կամ աւագ սարկաւագի պաշտօնը ընելով. և այսպէս սակաւ ժամանակի մէջ կը յայտնեն անոնց արուեստին բովանդակ գաղտնիքը, ընելով զանոնք եկամուտ չա-բագոյն քան զիրենք՝ ինչպէս վերը մի որ ևս քան զեւս կը զայ-բանայ։ Սաւրագեղցոց շատերը ռուս անցագրով ընդ բովանդակ

digitised by A.R.A.R.@

Ռուսաստան կը շրջին, ըստ երեւութին առանց ամենեւին գործ մի ունենալու, թէպէտ միշտ հետերնին գեղեցիկ ու թանկ զարդուց արկղ մի կը տանին, որով հարկաւոր եղած ժամանակ կարող են դիւրաւ փերեզակ ձեւանալ։ Բայց ասոնք ոչ միայն զօտարս՝ այլ և իրենց համարուստներ իսկ կողոպտել չեն խղճեր. օրինակի համար, կը բռնեն Սաւրացւոց մին և կը ստիպեն որ տայ բովանդակ ունեցածը, սպառնալեաք մատնելու զինքը տեղւոյն իշխանաց. ողորմելին բանտերու մէջ չփտտելու համար՝ կը ստիպուի նղովելով տալ անոնց շատ տարիներ անիրաւութեամբ գանձածը։

Վերջերս ոստիկանութիւնը իմանալով ասոնց ըրածը՝ սկսան լրտեսել զանոնք, բայց սաւրացիք և յայսմ կրցան օրինաւոր պատժէն խոյս տալ։ Կը պատմեն որ երբ անոնք զիրենք վտանգի մէջ կը տեսնեն, իսկոյն կ'անհետացընեն բոլոր քովերնին եղած խարէական թղթերը, բաց ի անոնցմէ՝ որով կրնան զիրենք ըստ ժամուն պիտոյից՝ կամ թուրք և կամ պարսկի հպատակ ցուցընել. այս պատճառաւ ահա արտասահման կ'ուղարկուին ի Պարսս կամ 'ի Թուրքաստան՝ ըստ իւրաքանչիւր անցագրի. և ես իսկ՝ մինչդեռ ի Նախիջեւան կը գտնուէի՝ յաճախ հանդիպած եմ անոնց, որ կալանաւոր՝ զինուորաց ուղեկցութեամբ դէպ ի Պարսս կ'երթային. բայց հազիւ թէ Պարսից սահմանը կը մտնեն, երկրորդ օրը դարձեալ Ցումբուլի կամ ուրիշ գիւղի մի մէջ բնակող իրենց ընտանեաց քով կը դառնային։ Սաւրացիք յաճախ խոստացած են՝ որ այլ եւս ի Ռուսաստան պիտի չերթան ողորմութիւն ժողվելու համար, բայց երբէք խոստմունքնին չպահեցին. որովհետեւ գրեթէ մանկութենէ ի վեր թափառական կենաց սովորած՝ իրենց համար այն անհրաժեշտ հարկ մի դարձած է։ Երբ կը տեսնեն թէ գրպաններն դատարկուած է՝ կը սկսին օտար երկիրներ չուել, երբեմն ոտքով, իւրաքանչիւրն իւր մանրած լաւաշ պարունակող պարկը թիկունքը դարկած, յուղարկեալք յընտանեաց շատ արտասուօք և տրտմութեամբ, որով հետեւ շատերը կամ բանտերու մէջ կը մեռնին՝ կամ բնակութիւններն ի Ռուսաստան կը հաստատեն։ Կը հանդիպէին երբեմն որ այդ օտարաշրջիկները՝ յետ 15—20 և մինչեւ 25 տարւոյ կը դառնան իրենց ընտանեաց քով, իսկ 4 կամ 5 տարին անոնց բացակայութեան սովորական ժամանակն է։ Դիտելու և գովելու բան է՝ որ ասոնց կանայք ամուսնաց բացակայութեան ժամանակն ապրելով իրենց ձեռաց աշխատութեամբ, կամ պարտիզին սակաւ արդեամբը, կը սպասեն իրենց արանց վերադարձին՝ սրբութեամբ պահելով ամուսնական

digitised by A.R.A.R.@

դաշնը. և այս գովելի յատկութիւնը յիրաւի մտադրութեան արժանի բան մ՚է։ Կրնամ համարձակ վկայել որ բնաւ ազգի մի մէջ պարկեշտութիւնը այնքան սրբութեամբ չի պահուիր՝ ինչպէս Հայոց մէջ, առ որս ամուսնական անհաւատարմութիւնն ամենամեծ մեղք համարուի գիւղական կենաց մէջ։

Սուրացիք նիհար են, մեծաւ մասամբ բարձրահասակ, աշխոյժ սեւ աչքերով, յորս յայտնի կը նշմարուի խելք ու խորագիտութիւն. տօնը մաքուր ու կոկիկ կը հագնին, իսկ յատարութեան ցնցոտեօք կը շրջին։ Թէպէտ օտար երկիրներ թափառելու վարժած են՝ բայց և այնպէս տնտեսական պարապմանց ալ սէր ունին. մեծաւ մասամբ պարտիզագործութեամբ կը զբաղին, զոր և ուսուցին նաեւ տեղացի Հայոց. յայսմ ահա Սուրացիք ունեցան և քաղաքակրթիչ յատկութիւն, որով պարտիզագործութեան հետ ի միասին սորվեցուցին բնակչաց՝ նաեւ շնորհքով տուներ շինել, աւելի լաւ ապրիլ, եւրոպական տարազով զգենուլ, և այլն։ Ուստի նախ իրենց կանանցմէ սկսելով, անոնց նեղ ու երկայն կարմրագոյն կտաւէ շինուած շապիկը և կարճ արխալուխը, փոխանակեցին եւրոպական տարազով, թէպէտ սակաւ մի այլայլած։ Ասոնց պատճառաւ տեղացիք այլ իմացան ինքն եռաց (սամովար), թէյի, սուրճի, յախճապակեայ անօթոց և նմանեաց գոյութիւնը։ Ամէն սուրացւոյ տուն կրնանք հանդիպիլ պղնձէ (tombac) գեղեցիկ ինքնաեռի, արտասահմանի ազնիւ յախճապակեայ և ապակարեալ խեցեղէն անօթոց, արծաթէ դըգալներու, Խորասանու և Ղարաբաղի գորգերու, վարագոյրներու. միով բանիւ եւրոպական տան մի ամենայն պատշաճից, չնայելով որ այսպիսի տանուտէր մի կը բնակի, օրինակ իմն, Դարալաղըզի լեռնային գիւղի մի մէջ, շրջապատուած վայրի և ամայի բնութեամբ։ Կանայք ճոխութեամբ կը հագնին մետաքսէ անկուածներ, և կը զարդարուին պէսպէս թանկագին իրերով. շատ ցանցառ կը հանդիպի այնպիսի սուրացի՝ որ չունենայ մարգարիտ, ադամանդ և զանազան ազգաց ոսկեդրամներ, որոցմով կը շինուին կանանց գլխու և կուրծքի արդուզարդն։

Այժմ այդ ոչ գովելի արուեստով պարապողներ շատ նուազեցան, որովհետեւ սկսան զանքն ամենայն կերպով փընտռել. ուստի բռնադատուած են մեծաւ մասամբ վաճառականութեամբ զբաղիլ, յորում ամենայարմար են. իսկ իրենց խաչագողութեան արուեստը ժառանգութիւն թողուցին տեղացի Հայոց և պարսկահպատակ Ասորւոց, որ կը թափառին ի Ռուսաստան ամենախեղճ վիճակի մէջ, և գնչուներու նման կը հաւաքեն չնչին ողորմութիւններ, ինչպէս՝ թաս մի հաճար, վարսակ, պատառ մի հաց, և այլն։

digitised by A.R.A.R.@

Ատրպատականի ուրիշ գաւառներու գաղթականներէն՝ Ուրմիացիք և Խոյեցիք՝ ընտիր երկրագործ են, կը սիրեն նաև պարտիզագործութիւն և բանջարանոց դարմանել, դարձեալ Ուրմիացիք մանաւորապէս կտաւ հիւսելու կը պարապին։ Մարաղեցիք՝ որ կը բնակին Ղարալաղըզի վիճակի՝ Վերին և Ստորին Աղա և Ցերէ, և Նախիջևանու վիճակին՝ Հաճիվար գիւղերու մէջ, բաց յերկրագործութենէ՝ առանձին կերպով հիւսնութեամբ կը զբաղին։ Մարաղեցիք հայերէն չեն խօսիր՝ այլ թաթարերէն, թէպէտ անխառն արեամբ հայ են. բայց վերջերս տղաք սկսան իրենց լեզուն խօսիլ, թէ և անոնց խօսուածքի մէջ բազմաթիւ թաթար բառեր և դարձուածքներ պակաս չեն։ Բուն Հայերն այսու կը տարբերին ի գաղթականաց, որ իրենց խօսած լեզուն տարբեր է, թէպէտ և ամէն հայ կը հասկանայ. գլխաւոր զբաղանքնին ցորենի մշակութիւն և խաշնատածութիւնն է, և միանգամայն ալ քաջ շերամաբոյծ են։ Շերամաբուծութիւնը ասոնց ի սկզբանէ ունեցած զբաղանքն է, և զոր կը հաւաստեն իրենց մրգաբեր պարտիզաց մէջ գտնուած դարաւոր թթենիք. իսկ այգի գրեթէ բնաւ չեն դարմաներ։

Շարունակելի

ՆԵՄԵՍԻՈՍԻ ԳԻՐՔԸ, ԵՒ ԴԷՋԱ ԻՏԱԼԱՑԻ ՀԱՅԱԳԻՏԻՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ

Մերթ ընդ մերթ թանձր խաւարի միջէն՝ արդէն մեծարուած ու սիրելի անուանք կը յայտնուին, ուժով կամ դողդոջ մատենագրաց, մինչդեռ այդ հանճարեղ անձանց գրուածքն բոլորովին անհետ եղած են. երբեմն ալ՝ ընդ հակառակն, թռչնե-րու հետաքննութեամբ հնոց գիրք մը դուրս կ'ելլէ, զոր չես գիտեր որուն ընծայել. և եթէ անունն ալ մնացած ըլլայ, ստուերական անուն մ'է։

Ո՞վ է Նեմեսիոս։ — Իմաստասէր քահանայ մը, որ կը միացընէ զայն քրիստոնէական աստուածխօսութեան հետ. եպիս-

digitised by A.R.A.R.@